<<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական թեման՝ Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Մուխսյան

Ուսումնական հաստատություն՝ Թիվ 84 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 2

Հետազոտական աշխատանք 3

Ուսուցչի կողմից սովորողների ուսուցմն ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան 4

Եզրակացություն 13

Օգտագործված գրականության ցանկ 14

Ներածություն

Հետազոտության կարևորությունը: Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում ուսուցչի մասնագիտական կրթության որակի բարձրացումը, ուսուցիչ, ով արագ կհարմարվի նորամուծություններին և նորարարություններին և դրա հիման վրա ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և հասարակության կրթական պահանջմունքներին: Արդի ժամանակաշրջանում ավելի հաճախ է պահանջվում տարբեր բնագավառների գիտնականների ջանքերի միավորումը կրթության տեսության և պրակտիկայի առջև ծառացած բարդ խնդիրների լուծման համար: Հենց այդ առումով էլ չափազանց կարևոր է, որ կրթական գործընթացի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր սուբյեկտ հստակ պատկերացնի իր առարկայի դասավանդման առանձնահատկությունները, տեխնոլոգիաները և որոշի իր տեղն ու դերը մանկավարժական գործընթացում: Կրթության արդյունքի նոր հարացույցի ձևավորումը, նպատակների և խնդիրների փոփոխությունը կոչված են ապահովելու մարդու մուտքը սոցիալական աշխարհ, նրա սոցիալական մրցունակությունը և մասնագիտական, արդյունավետ գործունեությունը« որն էլ իր հերթին նոր պահանջներ է ներկայացնում մանկավարժներին՝ տիրապետելու մասնագիտական, հաղորդակցական« առարկայական կոմպետենցիաներին, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու մասնագիտական գործունեությանը:

Այս տեսանկյունից առաջնային է դառնում նաև մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական այնպիսի հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն սկսնակ ուսուցիչների մասնագիտական կայացմանը, մանկավարժական վարպետության ձևավորմանը, նրանց կողմից դասավանդման հիմունքների, ուսուցման սկզբունքների և օրինաչափությունների յուրացմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսման որակը:

Մեր հետազոտության թեմայի ընտրությունը պայմանավորված է ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետության ապահովման արդի ժամանակաշրջանի հրամայականով:

Թեմայի հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել ուսուցչի կողմից սովորողների ուսուցմն ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:

Հետազոտության խնդիրն է բացահայտել այն արդյունավետ եղանակներն, որոնց միջոցով ուսումնական հաստատությունում գործընկեր ուսուցիչների միջև տեղի է ունենում համագործակցություն, փորձի փոխանակում:

Հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ուսուցչի կողմից սովորողների ուսուցմն ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ինչպես է իրականացվում ուսուցչի կողմից սովորողների ուսուցմն ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Կրթության պահանջների անցնցում իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Կրթակարգը սահմանում է կրթական քաղաքականության հիմնական սկզբունքները, ըստ հանրակրթության ուսումնական բնագավառների և միջնակարգ հանրակրթական դպրոցի աստիճանների՝ սովորողներին ներկայացվող ընդհանրական պահանջները, հենքային ուսումնական պլանը, ուսումնական առարկաների չափորոշիչների ստեղծման, առարկայացանկի, դպրոցական չափորոշիչների և գնահատման համակարգի ձևավորման սկզբունքները:

Խաչվող հասկացությունները՝

- Պլանավորում և ռազմավարություն
- Մանկավարժություն և մեթոդիկա

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Մանկավարժություն
2. Դաստիարակություն

Հոգեբանություն

Ուսուցչի կողմից սովորողների ուսուցմն ու դաստիարակության պլանավորումը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան

Հանրակրթության պետական չափորոշիչ

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացող որակական պահնջները ՝ ըստ կրթական աստիճանների կարողություններ և ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբմունքները , սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշառման կարգը:

Հանրակրթության հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն:

Չափորոշիչը նպատակաուղղված է հաասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում ՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար ՝անկախ դրանց կազմակերպական – իրավական ձևից և ենթակայությունից:

Հանրակրթության պետական չափորոշիչը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից :

Առարկայական ծրագրերը և չափորոշիչները , որպես հանրակրթական պետական ծրագրի բաղկացուցիչ մասեր, հաստատվում են Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

Դաստիարակության դերը մարդու անձի ձևավորման մեջ

Մարդու անձի զարգացման ու ձևավորման մեջ երրորդ գլխավոր գործոնը դաստիարակությունն է: Ոչ ոք չի կարող ժխտել մարդու զարգացման և ձևավորման համար դաստիարակության ունեցած դերը: Սակայն չի կարելի գերագնահատել այն: Վ.Գ.Բելինսկին ասում էր. <<Դաստիարակությունը մարդուն կարող է դարձնել առաքինի Սոկրատես և կամ՝ այլանդակ Ներոն: Դաստիարակությունն ամեն ինչ է `և կյանք, և մահ, և փրկություն, և կործանում>>:

Չպետք է մոռանալ, որ բոլոր տարիքների դաստիարակության գործում մեծ է ուսուցման և կրթության նշանակությունը:

Ուսուցման ՝ դաստիարակչական գործառնության էությունն այն է, որ նա իրական հնարավոր գործընթացին տալիս է որոշակի նպատակաուղղվածություն և հասարակական նշանակություն:

Դա բխում է այն իրողությունից, որ ուսուցման գործընթացի և դաստիարակության գործընթացի միջև չկա բաժանարար գիծ: Դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու դեպքում այն իր բարերար ազդեցությունն է ունենում ուսուցման ընթացքի վրա և հակառակը:

Դաստիարակության տեսությունը ներառում է մի շարք տերմիններ: Այդ տերմիններից են հասկացությունը, դրույթը, կոնցեպցիան, վարկածը, փորձարարությունը, վերլուծությունը, սինթեզը և այլն:

Հասկացությունը մտածողության ձևերից է, ինչպես օրինակ, մտահանգումը, դատողությունը:

Դրույթը դատողությունն է, որի ճշմարիտ լինելը ապացուցվում է փաստերով, փաստարկումներով:

Կոնցեպցիան լատիներեն ծագում ունի, որը նշանակում է ըմբռնում, փոխկապակցված հայացքների խումբ որը դեռևս գիտական տեսություն չէ:

Վարկածը գիտական ենթադրություն է: Այն առաջ է քաշվում հատկապես գիտահետազոտական աշխատանքներ կատարելիս:

Փորձարարությունը ստացվաց արդյունքների մշակումն ու մեկնաբանությունն է:

Վերլուծությունը մտածողության հիմնական գործընթացներից է, որի ընթացքում մարդը մտքում մասնատում է ուսումնասիրվող երևույթի պատկերը:

Սինթեզը հունական ծագում ունեցող բառ է, որը նշանակում է միավորում, զուգորդում:

Դաստիարակության գործընթացի առանձնահատկությունները

Դաստիարակության **առաջին առանձնահատկությունն** այն է, որ նրանում հանդես են գալիս օբյեկտի և սուբյեկտիվ գործոններ: Օբյեկտիվ գործոններն այն պայմաններն են, որոնցում ապրում ու գործում է անձը, իսկ սուբյեկտիվ գործոնը դաստիարակողի արվեստն է, նրա մանկավարժական վարպետությունը:

Դաստիարակության գործընթացի **երկրորդ առանձնահատկությունը** նրա արդյուքի՝ միանգամից չերևացող կողմն :

Երրորդ առանձնահատկությունը նրա երկարատևությունն է, այսինքն մարդու դաստիարակությունը մեկ օրվա, մեկ տարվա գործ չէ: Այն երկար ու ձիգ տարիների ներգործությունների, ազդեցությունների, դաստիարակի տքնաջան աշխատանքի և ինքնադաստիարակության արդյունք է:

Դաստիարակության **չորրորդ առանձնահատկությունը** նրա անընդհատությունն է: Դեպքից դեպք իրականացվող դաստիարակությունը լավ արդյունք տալ չի կարող: Միայն տոնահանդեսները, արտադասարանային, արտադպրոցական միջոցառումները չեն կարող ապահովել դաստիարակության գործընթացի <<Ջրաղացի>> մշտապես առատ հոսող ջուրը :

Հինգերորդ առանձնահատկությունը նրա համալիր բնույթն է: Դրա տակ կարելի է հասկանալ դաստիարակության նպատակների, խնդրների, մեթոդների, հնարների, միջոցների, ձևերի զուգակցված կիրառումը:

Դաստիարակության վեցերորդ առանձնահատկությունը նրա երկկողմանի բնույթն: Այսինքն ՝ դաստիարակության գործընթացն ունի ներգործությունների երկու ուղղություն՝[1]

1.դաստիարակողը դեպի դաստիարակվողները

2.դաստիարակվողներից՝ դեպի դաստիարակողը:

Այսպիսի գործընթացում և դաստարակողը, և դաստիարակվողները իրականացնում են անձնական և ընդհանուր դաստիարակություն: Միայն այդպիսի գործունեությունը կարող է ապահովել դաստիարակության բարձր արդյունք:

Վերջապես դաստիարակության գործընթացի յոթերորդ առանձնահատկությունը նրա ամբողջական բնույթն է: Այդ նշանակում է ՝ դաստիարակվողներին դաստիարակել ոչ թե մեկ ուղղությամբ, այլ դաստիարակության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ

արժություն» ամսագիր N4, 2003, էջ 6-15:

մասերի բոլոր ուղղություններով ՝ մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական և այլն:

Սովորողների ուսուցման և դաստիարակության պլանավորումը

Վերջին տարիներս ժողովրդական կրթության մարմինները զգալի աշխատանք են կատարել դպրոցի նյութական բազան ամրապնդելու , դպրոցական շենքերի ու սարքավորման սանիտարական վիճակը բարելավելու, անտանգության տեխնիկայի և դպրոցականների առողջության պահպանման միջոցառումներին հետևելու, ուսումնական ժամանակի ճիշտ բաշխման ու օգտագործման վերահսկումն ապահովելու, դպրոցականների արտադասարանական գործունեությունը կանոնակարգելու, սովորողների ֆիզիկական դաստիարակության դրվածքը կատարելագործելու, դպրոցների ներսն ու դպրոցամերձ տեղամասը բարեկարգելու, տաք սնունդ կազմակերպելու ուղղությամբ:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի ճիշտ պլանավորումը հնարաոր է դպրոցի ադմինիստրացիայի հասարակայնության կողմից դպրոցի ուսումնանյութական բազայի բարելավմանը, դպրոցի շենքի և սարքավորման շահագործման ժամանակ սանիտարահիգենիկ նորմերի խիստ պահպանմանը ցույց տրվող ուշադրության պայմաններում միայն :

Ընդ որում հատուկ ուշադրություն պետք է դարձնել դասասենյակների լուսավորվածությանը և նստարանների ՝ դպրոցականների տարիքին համապատասխանող չափերին:

Գերմաներեն առարկայի կարևորությունը և դասավանդմանառանձնահատկությունները

Այսօր աշակերտներին ավելի խոր լեզվական գիտելիքներ և հմտություններ են անհրաժեշտ՝բարձրագույն կրթություն ստանալու, տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող աշխատանքի շուկայում մրցակցելու և քաջատեղյակ քաղաքացիներ լինելու համար: Աշակերտը պետք է իմանա գերմաներեն լեզվի տառերը, քերականական կանոնները, բառերի թարգմանությունը, կարողանա տեքստը ճիշտ վերլուծել:

Տեխնոլոգիաների օգտագործումը պետք է սովորելու և սորեցնելու անբաժանելի մասը դառնա: Պետք է ուշադրություն դարձնել համակարգչային ՝ տեխնոլոգիական չափորոշիչների վրա, որոնք հաջորդում են համապատասխանաբար հինգերորդ և ութերորդ դասարանների չափորոշիչներին: Այս հմտությունները զարգացնելու պատասխանատվությունը պետք է բաժանվի բոլոր առարկաների ուսուցիչների միջև:

Գերմաներենի ուսուցումն ունի առանձնահատուկ դեր , դրա նպատակն է սովորողների մեջ ձևավորել և զարգացնել լեզվական մտածողություն: Կրտսեր դպրոցականի իմացական, ֆիզիկական , հոգեբանական ոլորտներում անգնահատելի

որակական տեղաշարժեր է ենթադրում. Զարգանում է սովորողի մտածողությունը, նա կարողանում է ոչ ստանդարտ իրավիճակում գիտելիքը կիրառել: Զարգացնող ուսուցումը ուսումնական գործընթացում լեզվական խոսքի զարգացման երկխոսությունների ներդրման, խնդրահարույց իրավիճակների ստեղծման անհրաժեշտություն: Սրանք ծրագրային պահանջներն են, որոնց անտեսումը իջեցնում է դասի արդյունավետությունը և կասեցնում աշակերտների մոդելի զարգացումը: Գերմաներենի ուսուցման ժամանակ շատ կարևոր է կարդալու և հասկանալու գործընթացը, ընկալել տեքստի բովանդակությունը և վերարտադրել հայերեն:

Յուրաքանչյուր դասընթացի, ինչպես նաև գերմաներենի ուսուցիչը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ բոլոր աշակերտներն իրարից տարբերում են իրենց միջինությամբ. նրանք ունեն տարբեր հակումներ ու ճանաչողական հետաքրքրություններ, տարբեր դժվարություններ, հոգեկան գործընթացների զարգացման տարբեր մակարդակներ և այլն: Ուստի պետք է դասընթացը կազմակերպել այնպես, որ ստացվի առավելագույն արդյունավետություն, աշակերտները չձանձրանան դասին, դասը չվերածվի անհետաքրքիր կույտի: Այս խնդրի իրագործման համար ուսուցիչը պետք է յուրաքանչյուր աշակերտի հնարավորություն տա ծրագրային յուրացնելու իր կարողությունների սահմաններում, որպեսզի ուսուցումը հարմարեցվի սովորողի զարգացման տեմպերի, և վերջինս դառնա առավել ինքնավստահ ու վայելի ուսման բերկրանքը: Կարևոր է, որ ուսուցիչն իր ձեռքի տակ ունենա բազմաբնույթ ու բազմաշերտ առաջադրանքներորոնք կօգնեն իրեն իրականացնելու անհատականեցված ուսուցում: Այս նպատակին են ծառայում ստեղծված ուսումնաօժանդակ նյութերը, որոնց միջոցով ուսուցիչը հնարավորությու կունենա բացահայտելու իր սովորողների ներուժը և հետաքրքրություն կառաջացնի գերմաներեն առարկայի նկատմամբ:

Ըստ չափորոշչային պահանջների ՝ ուսումնական գործընթացում հարկավոր է ապահովել սովորողների պատրաստվածության ցանկալի մակարդակը: Նախընտրելի է առավել մեծ թվով սովորողների ընդգրկումը ՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով շրջանավարտներին ՝ շարունակելու կրթությունը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական, ուսումնական հաստատություններում:

Ուսուցչի և աշակերտների նախապատրաստվելը դասին

Դասին նախապատրաստվելը առանձնապես անհրաժեշտ է մանկավարժական աշխատանքի բավարար փորձ չունեցող երիտասարդ ուսուցիչների համար:

Ուսուցչի դասին նախապատրաստվելու մեջ տարբերում են երկու փուլ՝նախնական և անմիջական: Ինչպես բոլոր առարկաներից, այնպես էլ գերմաներեն առարկայից դասին նախապատրաստվելը ուսուցչի կողմից ենթադրում է մասնագիտական,

մանկավարժական գրականության ուսումնասիրում, ուսումնական ծրագրի պահանջների բովանդակության ու նրա բացատրագրին, դասագրքերին, ուսումնական ձեռնակներին և ուրիշ ուսուցիչների աշխատանքի փորձին ծանոթացում, տվյալ դասի տեղը ծրագրի բաժնի կամ թեմայի համակարգում որոշում, թեմատիկ պլանավորում: Ուսուցչին անհրաժեշտ է նաև ծանոթանալ հարակից առարկաների և ցածր ու բարձր դասարաններում իր առարկայի ծրագրերին և դասագրքերին:

Ուսումնական տարվա սկզբին ուսուցիչը բաշխում է ժամանակի վրա ծրագրային բոլոր թեմաների ուսաումնասիրությունը , սահմանելով համապատասխան օրացույցային ժամկետները ժամկետները , հաշվի առնելով շաբաթական ժամերի քանակը , որոնք հատկացվում են ուսումնական պլանով տյալ առարկայի ուսումնասիրությանը և ուսումնասիրությանը և ուսումնական պարապմունքների դասացուցակը : Այդ ձևով մշակված ծրագիրը ուսուցչին ծառայում է որպես իր առարկայի համար օրացուցային պլան, օգնելով նրան վերահսկելու ծրագրի առանձին թեմաներն անցկացնելու ժամկետները `ավելորդ շտապողականությունից խուսափելու, նյութի ուսումնասիրության մեջ ետ չմնալու համար:

Պակաս կարևոր չէ դասի յուրաքանչյուր փուլում ուսուցման մեթոդների ու հնարների, աշակերտների իմացական գործունեության բնույթի որոշումը, դասին աշակերտների խմբային և անհատական աշխատանքի զուգակցումը, անհրաժեշտ դիդակտիկ նյութի, փորձերի ուսուցման զննական ու տեխնիկական միջոցների ընտրությունն ու պատրաստումը: Առաջիկա դասին պատրաստվելիս հարկավոր է վերլուծել նախորդ դասերը որոնք անցկացվել են տվյալ դասարանում, միջոցներ նախատեսելու համար հայտնաբերված թերություններն ու բացերը վերացնելու ուղղությամբ: Դասի հաջողությունը և նրա արդյունքները կախված են ոչ միայն ուսուցչի այլ նաև աշակերտների նախապատրաստությունից:

Աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպումը դասի ընթացքում

Յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը ապահովում է աշակերտների ակտիվիմացական գործունեությունը՝ օգտագործելով նրա կազմակերպման տարբեր ձևերը՝ֆրոնտալ, կոլեկտիվ և անհատական: [2]

Ֆրոնտալ ձևը նպաստում է ուսուցչի և աշակերտների միջև մոտիկ հարաբերությունների ստեղծմանը, աշակերտների համատեղ համերաշխ աշխատանքին, որի ընթացքում հասնում են ընդհանուր մասնակցության ոչ միայն կրթական, այլ նաև դաստի արակչական խնդիրների լուծման, փոխօգնության, հաստատուն իմացական

[2] Մկրտչյան Մ.Ա., Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, Երևան, 2001, էջ 120:

հետաքրքրությունների ձևավորման մեջ, այն թույլ է տալիս օգտագործելու բազմազան մեթոդներ ու հնարներ ուսուցման պրոցեսն ակտիվացնելու համար: Այդ ձևը ապահովում է աշխատանքի մեջ դասարանի բոլոր աշակերտների ներգրավումը և նրանց ընդհանուր առաջընթացը ուսման մեջ: Անհատական առաջադրանքները կարող են լինել ընդհանուր կոլեկտիվ առջադրանքի մասը, և դրանից հետո բոլոր աշակերտները կմասնակցեն ստացված արդյունքների քննարկմանը:

Կրթակարգն իր կառուցվածքով ճկուն է, մարդու և հասարակության կենսական պահանջներին ու պետության պատվերին համապատասխան փոփոխելի ու զարգացող: Կրթակարգի վերահսկումն ու գնահատումն իրականացվում են նրա պահանջների կատարմանն աջակցելու, շարունակական զարգացումն ապահովելու, կիրառման ընթացքը գնահատելու և վերահսկելու նպատակով:

Հանրակրթական դպրոցներում և կրթության կառավարման մարմիններում իրականացվում են ներքին և արտաքին վերահսկողություն և գնահատում:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: [3]

Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան:

Դասի դաստիարկաչական պահանջները իրականացնելու համար ուսուցիչը դնում և լուծում է դաստիարակչական խնդիրներ՝ բարոյական, գողագիտական,

[3] Մանկավարժություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր # 1, 2003, ԿԳՆ Կրթական բարեփոխումների կենտրոն:

գաղափարաքաղաքական և այլն: Այս ընթացքում աշակերտների տեսածի, լսածի և դասի ընթացքում կիրառմավ մեթոդների արդյունքում երեխայի մոտ ձևավորվում են որոշակի կարծիքներ, հայրենասիրական մարդասիրական հայացքներ, բարոյական որակներ, գեղագիտական ճաշակ և այլն:

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»[4]:

Վերահսկման և գնահատման արդյունքները հիմք են ծառայում կրթակարգի պահանջների վերանայման և կատարելագործման համար, ինչն իրականացվում է կրթակարգի մշակման և կատարելագործման համապատասխան հանրապետական կառույցի կողմից: Կրթակարգի ներդրումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից հաստատված 12-ամյա միջնակարգ կրթության անցումն ապահովող միջոցառումների ցանկի և ժամանակացույցի համաձայն: Յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի առաջարկությամբ հանրակրթության պետական կրթակարգում կատարում է անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ: Կրթակարգի նախագծում տեղ գտած թերությունները և չհաղթահարված պրոբլեմները:

1. Որպեսզի ավելի հստակ պատկերացվեր, թե կրթակարգով նախատեսված հիմնադրույթները ինչով են պայմանավորված և կրթության ոլորտի ինչ նոր որակ են ենթադրում, արժեր, որ կրթակարգում ավելի հստակ և համարձակ ներկայացվեր կրթության ոլորտի ներկա իրավիճակը: Այս առիթով նախագծում առանձնացված էր միայն հետևյալը. «Միջնակարգ հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպումը և կրթության բովանդակությունը պետք է բարեփոխվեն՝ հաշվի առնելով մի շարք հիմնախնդիրների առկայությունը: Մասնավորապես՝

[4] Подласый И. П., Педагогика начальной школы, М. 2000, էջ 233

• սովորողների ուսումնական բեռնվածությունը չափազանց մեծ է, իսկ կրթության բովանդակային պահանջները բարդ են և ուղղված են բարձր առաջադիմություն ունեցողներին,

• չափից դուրս է կարևորվում սովորողների կողմից տեղեկատվության պասիվ ստացումն ու փաստերի մտապահումը, բավարար չափով ուշադրություն չի դարձվում նրանց ճանաչողական-իմացական հմտությունների զարգացմանը,

• միևնույն դասարանի և տարբեր դասարանների կտրվածքով անբավարար է իրականացվում բովանդակության փոխհամապատասխանեցումը,

• ուսումնական ծրագրերը հիմնականում հրահանգչական բնույթ են կրում,

• առարկայական ծրագրերը բացարձակացնում են ուսուցչի և դասագրքի դերը՝ թերագնահատելով ուսուցման ժամանակակից մեթոդները և այլընտրանքային աղբյուրները,

• գործող չափորոշիչները չեն համապատասխանում XXI դարի պահանջմունքներին»:

2. Կրթակարգով սահմանված են հանրակրթության բովանդակային բաղադրիչները: Սակայն, ինչպես երևում է տարբեր հրապարակումներից ու քննարկումներից, հստակ ընկալում չկա, թե ինչ է նշանակում «կրթության բովանդակության բաղադրիչ» արտահայտությունը: Քանի որ կրթակարգում էլ է բացակայում հարցի բացատրությունը, այս կարևորագույն նորույթը մնում է ընթերցողների և մասնագետների կողմից չնկատված և չկարևորված:

3. Կրթակարգով ամրագրվում է դաս-դասարանային համակարգը՝ իր հիմնական ատրիբուտներով հանդերձ:

4. Կրթակարգում բացակայում են մանկավարժական նորարարության և նորամուծությունների կազմակերպման կարգն ու չափորոշիչները:

5. Մանկավարժական նորարարությունը ընդհանրապես չի կարևորվում;

6. Կրթակարգով հաստատագրված չէ մանկավարժական հասկացությունների համակարգը, իսկ փաստաթղթին բնորոշ է տերմինաբանական խառնաշփոթ:

7. Կրթակարգը լեցուն է անհարկի կրկնություններով և ավելորդ պարբերություններով (նման թերությունները վերացնելով հնարավոր է փաստաթղթի ծավալը կիսով չափ կրճատել):

Եզրակացություն

Կրթությունը նպատակաուղղված է հիմնականում գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերմանը, երեխայի ընդհանուր զարգացման և անձի ձևավորման խնդիրները, ներառյալ մտագործունեության տարբեր տեսակների յուրացումն ու հոգևոր արժեքների ձևավորումը, մղված են երկրորդ պլան: Մասնավորաբար, չափից ավելի է կարևորվում սովորողների կողմից տեղեկատվության պասիվ ստացումն ու փաստերի մտապահումը:

Ուսուցման և դաստիարակության գործընթացները խիստ առանձնացված են և մեկուսացված: Դաստիարակությունն իրագործվում է ինքնաբերաբար, տարերային, չհամակարգված: Ուսուցման գործընթացը խմբային բնույթի է, այն կազմակերպվում է ընդհանուր ճակատով և բացառում է ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովումը: Փաստորեն ուսուցման գործընթացը բնույթով ոչ թե հանրակրթային է, այլ սելեկտիվ:

Հանրակրթությունը ժամանակակից քաղաքակրթության նվաճումներից է: Հենց հանրակրթական իմաստով վերաձևակերպված կրթական խնդիրները մարդկության համար դրսևորվեցին որպես պետական ու հասարակական կյանքի կազմակերպման բարդ հիմնահարց: Այսօր, փաստորեն, չկա մի երկիր, որը, բավարարված լինելով իր կրթական համակարգի իրավիճակով, չկարևորի այդ համակարգի բարեփոխման խնդիրը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Դավթյան Ն., Կրթության բովանդակության ներկա հիմնախնդիրները, «Մանկավարժություն» ամսագիր N4, 2003, էջ 6-15:
2. Մկրտչյան Մ.Ա., Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը, «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիա, Երևան, 2001, էջ 120:
3. Մանկավարժություն. գիտամեթոդական վերլուծական ամսագիր # 1, 2003, ԿԳՆ Կրթական բարեփոխումների կենտրոն: